ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-17/5»

ք. Երևան «19» 10 2017թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձակալ), մի կողմից, և քաղաքացի Նունե Հայրապետյանը՝ նույն. քարտ՝ 006178271, տրված՝ 07.08.2017թ. 013-ի կողմից, բնակվող Կոտայքի մարզ գ. Ջրվեժ Այգեգործական I թաղ. 5 տուն (այսուհետ՝ Վարձատու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում MITSUBISHI PAJERO 2.4, 34UM 894 Պետ. համարանիշով ավտոմեքենան (այսուհետ՝ Ուղևորափոխադրող ավտոմեքենա):

1.2 Վարձատուն Ուղևորափոխադրող ավտոմեքենան տրամադրում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Ուղևորափոխադրող ավտոմեքենան Վարձատուին է պատկանում է սեփականության իրավունքով, ինչը հաստատում է Ուղևորափոխադրող ավտոմեքենայի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը, սերիա՝ HB002375, տրված 30/09/2013թ.:

1.4 Վարձատուն երաշխավորում է, որ Ուղևորափոխադրող ավտոմեքենան վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.5 Ուղևորափոխադրող ավտոմեքենան, սույն պայմանագրի գործողության ընթացքում, առանց ժամային և օրային սահմանափակումների, գտնվում է Վարձատուի տրամադրության տակ:

1.6 Ուղևորափոխադրող ավտոմեքենայի շահագործման, պահպանության և վերանորոգման բոլոր ծախսերը կատարվում է Վարձատուի կողմից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1 Վարձակալից պահանջել Ուղևորափոխադրող ավտոմեքենան օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:

2.1.2 Եթե Ուղևորափոխադրող ավտոմեքենայից Վարձակալը օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.2 Վարձատուն պարտավոր է՝

2.2.1 Ուղևորափոխադրող ավտոմեքենան Վարձակալին հանձնել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից:

2.2.2 Վարձակալի պահանջով, անհատույց վերացնել հանձնման պահին Ուղևորափոխադրող ավտոմեքենայի առկա թերությունները:

2.2.3 Ուղևորափոխադրող ավտոմեքենան Վարձակալին տրամադրել Պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.4 Պատշաճ ձևով կատարել Ուղևորափոխադրող ավտոմեքենայի շահագործման, տեխնիկական զննման, պարտադիր ապահովագրության, հիմնական վերանորոգման ծախսերը:

2.3 Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1 Վարձատուից պահանջել Պայմանագրի 2.2.1 կետով նախատեսված ժամկետում իրեն տրամադրել Ուղևորափոխադրող ավտոմեքենան:

2.4 Վարձակալը պարտավոր է

2.4.1 Ուղևորափոխադրող ավտոմեքենան օգտագործել Պայմանագրին և Ուղևորափոխադրող ավտոմեքենայի նշանակությանը համապատասխան:

2.4.2 Չհանձնել Ուղևորափոխադրող ավտոմեքենան ենթավարձակալության:

2.4.3 Պայմանագրի դադարեցման դեպքում, մեկ օրվա ընթացքում Ուղևորափոխադրող ավտոմեքենան վերադարձնել Վարձատուին՝ իր բոլոր պատկանելիքներով:

3. ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ուղևորափոխադրող ավտոմեքենան ընդունվում է Վարձակալի և Վարձատուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ուղևորափոխադրող ավտոմեքենան Վարձակալին հանձնելու փաստը ֆիքսվում է Վարձակալի և Վարձատուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով վարձակալության համար նախատեսված օրը ներառյալ Վարձատուն Վարձակալին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ուղևորափոխադրող ավտոմեքենայի Վարձակալին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վարձատուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե Ուղևորափոխադրող ավտոմեքենան համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Վարձակալը պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վարձատուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե Ուղևորափոխադրող ավտոմեքենան չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Վարձակալը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վարձատուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Վարձակալը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վարձատուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Վարձակալը չի մերժում Ուղևորափոխադրող ավտոմեքենայի ընդունումը, ապա Ուղևորափոխադրող ավտոմեքենան համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վարձատուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալության գինը կազմում է 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Վարձատուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալության գինը կայուն է և Վարձատուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Վարձակալը նվազեցնելու այդ գինը:

4.2 Վարձակալը Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Վարձատուն պատասխանատվություն է կրում Ուղևորափոխադրող ավտոմեքենայի՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրով նախատեսված Ուղևորափոխադրող ավտոմեքենայի տրամադրման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարների հետ:

5.4 Վարձակալի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վարձատուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Վարձակալի մոտ չի վերացել Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալության պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վարձատու կամ Վարձակալ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վարձատուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վարձատուն:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալության համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալության համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐՁԱՏՈՒ	ՎԱՐՁԱԿԱԼ
Նունե Ռաֆիկի Հայրապետյան Հասցե՝ Կոտայքի մարզ գ. Ջրվեժ Այգեգործական I թաղ. 5 տուն Բանկը՝ ՎՏԲ Հայաստանյան Բանկ ՓԲԸ Հ\Հ 16043024489901 նույն. քարտ՝ 006178271, տրված՝ 07.08.2017թ. 013-ի կողմից	««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68 Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Հեյթոն մ/6 Հ\Հ 16351801254 3 ՀԿՀՀ 02602449
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«19» 10 2017թ. կնքված
«ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-17/5» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված ցուցանիշի համարը	գնումների պլանով նախատեսված միջոցների ՊԳՄՀ տող ընկալիչը՝ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	60171110	**Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալություն** Պետհամարանիշը՝ 34UM894 Մակնիշը՝ MITSUBISHI Տիպարը՝ PAJERO 2.4 ՏՄ Տեսակը՝ թեթև մարդատար Թափքի տեսակը՝ ունիվերսալ Գույնը՝ Կապույտ արծաթագույն Թողարկման տարեթիվը՝ 1996 Նույնացման համարը՝VIN V21-4300389 Շարժիչի հզորությունը (ԿՎՏ/Ձ.ՈՒ.)՝ 93/126	դրամ	300000	73 օր	ք.Երևան,փ.Կ. Ուլնեցու 68	4-րդ եռամսյակ

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՎԱՐՁԱՏՈՒ

Նունե Ռաֆիկի Հայրապետյան
Հասցե՝ Կոտայքի մարզ գ. Ջրվեժ Այգեգործական I թաղ. 5 տուն
Բանկը՝ ՎՏԲ Հայաստանյան Բանկ ՓԲԸ
Հ\Հ 16043024489901
նույն. քարտ՝ 006178271, տրված՝ 07.08.2017թ. 013-ի կողմից

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՐՁԱԿԱԼ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական
և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
Ձեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 19 » 10 2017թ. կնքված
«ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-17/5» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	60171110	Ուղևորափոխադրող ավտոմեքենայի վարձակալություն										57600	180800	300000	**300000**

ՎԱՐՁԱՏՈՒ

Նունե Ռաֆիկի Հայրապետյան
Հասցե՝ Կոտայքի մարզ գ. Ջրվեժ Այգեգործական I թաղ. 5 տուն
Բանկը՝ ՎՏԲ Հայաստանյան Բանկ ՓԲԸ
ՀՀ 16043024489901
նույն. քարտ՝ 006178271, տրված՝ 07.08.2017թ. 013-ի կողմից

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՐՁԱԿԱԼ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.ՈՒլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
ՀՀ 1635180125 43
ՀՎՀՀ 02602449

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
«ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-17/5» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
«ՆՄԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-17/5» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն